BIASI RinNova Adaptive (կոնդենսացիոն) գազի կաթսա

Ջեռուցման համակարգի ջրի ճնշման կարգավորում

Ինչպե՞ս ստուգել և հարկ եղած դեպքում կարգավորվել գազի կաթսայի ջրի ճնշումը:

- **Մուտք գործել "INFO" մենյու** (նկարում **14** կոճակը):
- Միաժամանակ սեղմել ջեռուցման ջերմաստիճանը բարձրացնող և իջեցնող կոճակները (նկարում **15** և **16** կոճակները), Էկրանին կհայտնվի. "J00" և ճնշման արժեք (օր.՝ "13"՝ 1.3 բար)



- **Բացել լիցքավորման ծորակը**.
  Բացել կաթսայի տակ գտնվող լիցքավորման ծորակը և միաժամանակ հետևել ջեռուցման համակարգի ճնշմանը էկրանին:



- **Ճնշումը պետք է լինի 1 բարից 1.5 բար միջակայքում** (օր.՝ 1.3 բար):
- Գործողությունն ավարտելուց հետո փակել լիցքավորման ծորակը և հանեք օդը ջեռուցման մարտկոցներից (ռադիատորներից):

Հարկ եղած դեպքում, զանգահարել **BIASI Armenia** սպասարկման կենտրոն՝

+374 91 590 590 հեռախոսահամարով: